Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի №1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (9 դասաժամ), անգլերենի (6 դասաժամ), մաթեմատիկայի (15 դասաժամ), տեխնոլոգիայի (6 դասաժամ) և պատմության (14 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարերի:

Հարցազրույցի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

— դիմում (ձև 1),

— 1 լուսանկար 3×4 չափի,

— բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

— անձը հաստատող փաստաթուղթ,

— «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

— ինքնակենսագրություն (ձև 5),

— այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

— ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

— հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

— որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ. սեպտեմբերի 5–ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թ. սեպտեմբերի 26-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի «Զոլաքար գյուղի **№1** միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում,

Հասցեն՝ գ. Զոլաքար, 1-ին փողոց, շենք՝ 38 :

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094896627 հեռախոսահամարով: